ԿՐԹԱԿԱՆ

# ԱՅՍ ՏԱՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹԻՎԸ ԲԱՎԱԿԱՆԻՆ ՄԵԾ ԷՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դրամաշնորհ՝ ավելի քան 4000 դիմորդ: Շուրջ 1390 քննվողներ ընդգրկվել են վրացերենի ուսուցման ծրագրերում: Ֆինանսավորվել է ավելի քան 200-ը:

2022 թվականին բարձրագույն ուսումնական հաստատություններ չի ընդունվել ընդհանուր հաշվով 8 հազար դիմորդ, այդ թվում՝ առարկաների նվազագույն շեմը հաղթահարած դիմորդները, որոնք ունեցել են համեմատաբար ցածր միավորներ համապատասխան ֆակուլտետն ընդունվելու համար, ուր չափազանց մեծ մրցակցություն է եղել:

Նշենք, որ ազգային փոքրամասնությունների համար նախատեսված «1+4» ծրագրին դիմորդը հնարավորություն ունի ընդունվել Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններ: Նվազագույն շեմն անցնելու համար, դիմորդը պետք է հավաքի 24-ից ավելի միավոր: Պետական դրամաշնորհ ստանում է ամենաբարձր միավոր հավաքած 100-ական ազգությամբ հայ եւ ադրբեջանցի դիմորդ:

Վրաստանի Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնը վիճակագրական վերլուծություն է կատարել տարբեր առարկաների, այդ թվում՝ ընդհանուր ունակությունների հայերեն եւ ադրբեջաներեն թեստերի նախատեսմամբ:

Ընդհանուր ունակությունների թեստի առավելագույն միավորը 80 է:

Ըստ Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի, ընդհանուր ունակությունների, հայերեն քննությանը ,1+4» շրջանակներում մասնակցել է 557 ազգությամբ հայ դիմորդ, որի շնորհիվ, մոտ 25 տոկոսին չի հաջողվել հաղթահարել նվազագույնի շեմը:

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ՝ ԹԵԱ ԱԽՎԼԵԴԻԱՆՈՒ ԵՎ ՄԻԽԵԻԼ ՉԽԵՆԿԵԼՈՒ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

*Օգոստոսի 28-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Թեա Ախվլեդիանու եւ կրթության ու գիտության նախարար Միխեիլ Չխենկելու միջեւ կայացավ բարձր մակարդակի աշխատանքային հանդիպում:*



«Խաղաղության նախաձեռնություններ, ինչպես նաեւ քաղաքացիական իրավահավասարության եւ ազգային փոքրամասնությունների հետ ինտեգրման քաղաքականություն»՝ այս վերտառությամբ հանդիպմանը մասնակցում էին պետնախարարի եւ կրթության ու գիտության նախարարի տեղակալներ ու երկու գերատեսչությունների համապատասխան ներկայացուցիչներ:

Նախարարների աշխատանքային հանդիպմանը շեշտը դրվեց քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարության երկու կարեւոր առաջնահերթ ուղղությունների՝ պետական լեզվի ուսուցման եւ ազգային փոքրամասնություններ ներկայացնող քաղաքացիների որակյալ կրթության հասանելիության շրջանակներում առաջադրված խնդիրների կատարմանը:

Թեա Ախվլեդիանին ու Միխեիլ Չխենկելին քննարկեցին ազգային փոքրամասնություններով հոծաբնակ շրջաններում, պետնախարարի կողմից անցկացվող հանդիպումների ժամանակ, տեղի բնակչության եւ քաղաքացիական սեկտորի ներկայացուցիչներից ստացված առաջարկությունները, կարծիքներն ու կոնկրետ կարիքները, դրանց արձագանքման մեխանիզմները եւ համապատասխան ծրագրերի մշակումը:

Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարն ու կրթության նախարարը աշխատանքային հանդիպմանը քննարկել են նաեւ բռնազավթված տարածքներում բնակվող ուսանողներին, դիմորդներին եւ ուսուցիչներին աջակցելու հարցերը:

Աշխատանքային հանդիպումն անցկացվեց «Բազմազգ Վրաստան» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ եւ Ավստրիայի զարգացման հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԳԻՐՔ-ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՆՈՒՅՆ ՏԱՂԱՆԴԸ, ԲԱՅՑ՝ ՈՒՐԻՇ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ



*Տաղանդավոր նկարիչ, վաստակաշատ մանկավարժ, ակտիվ հասարակական գործիչ Վաղինակ Ղազարյանին այս անգամ մեր ընթերցողին կներկայացնենք մեկ ուրիշ դիտանկյունից:*

Վաղինակն արդեն 15 տարի է, որ աշխատում է «Գանձա-տարեգրություն» գրքի վրա, որն էլ մոտ ապագայում կներկայացնի ընթերցողին: Վ.Խաչատրյանը գրական աշխարհում բարձր գագաթներ գրոհելու, փորձառու գրողների դափնին վիճարկելու միտք չունի: Ասում է՝ պարզապես իր հոգու պարտքն է կատարում: Նպատակը անցյալն արժեւորելն է այսօրվա համատեքստում, ասել է թե՝ գլխավոր մեթոդը արդիականությունն է, պատմական փաստերի արդիականացումը:

- 1985 թվականն էր, որոշեցի կազմել Տերտերանց տոհմածառը, 10 տարի անց՝ տոհմի ալբոմը՝ 160 ընտանիքների լուսանկարներով եւ նշանավոր մարդկանց համառոտ կենսագրություններով: Այդտեղից էլ միտք ծագեց կերտել ծննդավայրիս՝ Գանձայի տարեգրությունը,- ասում է Վաղինակ Ղազարյանը:

Գյուղի նվիրյալն ու արժանավոր որդին ամիսներ շարունակ պրպտել է Երեւանի արխիվներում ու գրադարաններում, 1918 թվականի գաղթի մասին քաղվածքներ արել «Մշակ» եւ «Հորիզոն» թերթերից:

- Էրզրումից գաղթելուց հետո, արդեն 14-րդ սերունդն է ծնվում Գանձայում, սակայն շատերը հիշում են առնվազն մինչեւ պապերի պատմությունը: Տոհմերի մասին՝ սկսած 1855 թվականից, տեղեկություններ եմ փնտրել Գանձայի Սուրբ Աստվածածին եւ Սուրբ Կարապետ եկեղեցիների արխիվային հաշվետվություններում՝չափաբերական մատյաններում, օգտվել եմ շրջանային «Արշալույս» թերթի «պաղշիվկայից»… Մի խոսքով, գյուղի պատմությունը շարադրել եմ՝ հենվելով պատմական ստույգ աղբյուրների, մատենագրական տվյալների, վիմագրերի, արխիվային սկզբնաղբյուրների վրա՝ ջանալով հնարավորինս ճշգրիտ եւ ամբողջական ներկայացնել իմ հայրենի եզերքի պատմությունը,- ասում է նա:

«Գանձայի տարեգրություն» գիրքն ունի 32 բաժին, որոնք ամփոփում են Գանձայի վերջին 200-ամյա ուշագրավ պատմությունները:

Առաջին գլուխն սկսվում է Գանձա գյուղում եւ նրա շրջակայքում պահպանված մ.թ.ա. III-II դարերին վերագրվող կառույցների ու հուշարձանների նկարագրությամբ: Նաեւ միջնադարյան XI-XIV դարերում կառուցված, կանգուն մնացած երեք եւ քանդված չորս եկեղեցիների մասին տեղեկություններով ու լուսանկարներով: Բաժնում կտեղադրվի նաեւ հազարամյակների պատմություն ունեցող ստորգետնյա ուղիների մասին տեղեկություն եւ հեղինակի կողմից կազմված քարտեզը: Հաջորդող բաժիններում պատմվում է գանձացիների նախահայրենիք հանդիսացող Էրզրում գավառի, գաղթի, եկեղեցաշինության, գյուղի բարեկարգման, գյուղատնտեսության, Երկրորդ համաշխարհային եւ Արցախյան պատերազմներին գանձացիների մասնակցության, գյուղի երկու միջնակարգ դպրոցների, մանկապարտեզների, կարի ֆաբրիկայի, կաթի գործարանի, թատերական կյանքի, Վ.Տերյանի տուն-թանգարանի ու պոեզիայի «Տերյանական օրեր»-ի, մարզական կյանքի, գյուղական հիվանդանոցի եւ բժիշկների, Գանձայի գյուղկոոպի, ետխորհրդային տարիների ու այսօրվա իրավիճակի, Գանձայի գյուղական համայնքի մեջ մտնող Սաղամո փոքր գյուղի եւ բազմաթիվ այլեւայլ նշանավոր իրադարձությունների, դեմքերի ու դեպքերի մասին:

Առանձին բաժիններով կներկայացվեն նաեւ գիտության, գրականության, արվեստի եւ այլ բնագավառներում հայտնի մոտ 100 գանձացիների մասին, Գանձայի բոլոր 67 տոհմերի տոհմագրությունն ու տոհմածառերը, ինչպես նաեւ ժողովրդական բանահյուսության, բառ ու բանի, հետաքրքիր դեպքերի. գյուղական երգիծանքի եւ հումորի նմուշներ:

- Ինչպե՞ս մտահղացաք եւ հանձն առաք նման ծավալուն եւ նվիրյալ աշխատանք կատարել հարցին՝ Վաղինակ Ղազարյանը պատասխանում է.

- Իմ կարծիքով այս գիրքը յուրաքանչյուր ջավախքցու եւ գանձացու համար դեպի անցյալը վերադարձի ճանապարհ է…

*ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

*ք.Նինոծմինդա*

ՆԱ ԿԴԱՌՆԱՐ 85 ՏԱՐԵԿԱՆ

# ԼԵՎՈՆ ԱԶՐՈՅԱՆԸ՝ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ԱՍՊԵՏ

- Ես դատապարտված եմ եղել լրագրող դառնալու, թեեւ, դպրոցական տարիներին երազել եմ դառնալ զինվորական բժիշկ: Նույնիսկ ցանկանում էի ընդունվել Լենինգրադի ռազմական բժշկության ակադեմիա: Քննության նախօրեին թունավորվել էի եւ ակադեմիա չգնացի: Քանի շնչում եմ, պետք է զբաղվեմ ժուռնալիստիկայով,- սրանք «Արմենպրես» լրատվական գործակալության երկարամյա թղթակից, երջանկահիշատակ, ծնունդով թբիլիսցի Լեւոն Ազրոյանի խոսքերն են: Նա օգոստոսի 28-ին կդառնար 85 տարեկան:

Լեւոն Ազրոյանը կյանքից հեռացավ 2022 թվականի մարտի 1-ին. նա չկարողացավ հաղթել կորոնավիրուսը, սակայն հավատարիմ մնաց իր խոստմանը՝ «Քանի շնչում եմ, պետք է զբաղվեմ ժուռնալիստիկայով»:

Ծննդյան 82-րդ տարեդարձին ընդառաջ «Արմենպրես»-ի հետ հարցազրույցում Ազրոյանը նշել էր, որ երբեք չի զղջացել, որ ընտրել է ժուռնալիստիկայի ոլորտը, թեեւ մասնագիտական այլ երազանքներ է ունեցել:

Լրագրության ոլորտում 58 տարի գործունեություն ծավալած Լեւոն Ազրոյանն իր առաջին փորձը ձեռք է բերել Թբիլիսիում լույս տեսնող «Սովետական Վրաստան» թերթում:

Ազրոյանը հպարտությամբ էր նշում, որ չորս-հինգ տարի եղել է «Վրացինֆորմ»-ի սեփական թղթակիցը Հայաստանում: Երեւանում ապրելու տարիներին միշտ ստացել է «Սովետական Վրաստան», «Մոլոդյոժ Գրուզիի» եւ մարզական «Լելո» թերթերը: Բաժանորդագրվել էր հայերեն, ռուսերեն եւ վրացերեն թերթերի: Այդ պարբերականների միջոցով քաջատեղյակ էր իր ծննդավայրում տեղի ունեցող բազմազան ու բազմաբնույթ իրադարձություններին:



*Լավրիկ Սիսակի Ազրոյանը (գրական կեղծանունը Լեւոն Ազրոյան) ծնվել է 1937 թվականին, Թբիլիսիում: Ավարտել է Թբիլիսիի Ա.Ս.Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը: Ծառայել է խորհրդային բանակում, ապա աշխատանքի անցել Թբիլիսիում լույս տեսնող «Սովետական Վրաստան» թերթում:*

*1966 թվականի տեղափոխվել է Երեւան, որտեղ աշխատել է հեռագրական գործակալությունում (ՀՀԳ)՝ ներկայիս «Արմենպրես»-ում: Այնտեղ աշխատել է շուրջ 30 տարի՝ անցնելով թղթակցից մինչեւ բաժնի վարիչի-գլխավոր խմբագրի տեղակալի ուղին: 1993 թվականին տեղափոխվել է Հայաստանի կառավարության մամուլի ծառայություն, որտեղ աշխատել է շուրջ հինգ տարի՝ զբաղեցնելով մամուլի ծառայության ղեկավարի տեղակալի պաշտոնը:*

*Հայրենական ժուռնալիստիկային նրա 57-ամյա ծառայությունը նախկինում քանիցս նշվել է զանազան պարգեւներով:*

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# ՍԻՐՏԸ՝ ԱՄԵՆԻՑ ԱՐԱԳ ԾԵՐԱՑՈՂ ՕՐԳԱՆ



***Մասնագետների պնդմամբ, մարդկային օրգանիզմը փարբեր գործառույթներ իրականացնող, սակայն համաներդաշնակ օրգանների բարդ, թեեւ գրեթե կատարյալ մեխանիզմ է: Եթե մեխանիզմ է, հետեւաբար, բացառված չէ, որ ժամանակի ընթացքում այդ մեխանիզմի առանձին «դետալներ» մաշվեն, ծերանան: Հետաքրքիր է, ո՞ր օրգանն է մարդկային օրագանիզմի ամենաշուտ ծերացող «աքիլլեսյան գարշապարը»:***

***Մ. ՍԱՐԳՍՅԱՆ***

***Նինոծմինդա***

Մարդու ամենաարագ ծերացող օրգանը սիրտն է. պարզել են անգլիացի գիտնականները: Մեծ Բրիտանիայում բնակիչների 80 տոկոսի սիրտը մյուս օրգաններից ավելի շուտ է ծերանում, հայտնել են Լոնդոնի Համալսարանական քոլեջի հետազոտողները:

Ծերացման պատճառը մարմնի ավելորդ քաշն է ու քիչ շարժվելը: Մասնագետները ուսումնասիրել են 575 հազար մարդու առողջական վիճակը: Առավել կրիտիկական դեպքերում, մարդիկ 45 տարեկանում ունեցել են այնպիսի սիրտ, որը պետք է ունենային մոտ 60 տարեկանում:

Շուտ ծերացող սիրտը խոցելի է զանազան հիվանդությունների նկատմամբ, բացի դրանից, կարող է վաղաժամ մահվան պատճառ դառնալ: Գիտնականների հետազոտությունը շատ կարեւոր է այն առումով, որ Միացյալ Թագավորությունում մեծահասակ բնակչության երկու երրորդը ավելորդ քաշի խնդիր ունի կամ էլ ճարպակալում: Դա եվրոպական երկրների վատագույն ցուցանիշն է:

40 տարեկանից փոքր բրիտանացիների 89 տոկոսն ունի ժամանակից շուտ ծերացած օրգաններ: Իսկ բրիտանուհիների 41 տոկոսը նույն խնդիրն ունի: Կանանց բախտն այս հարցում ավելի շատ է բերել, քանի որ նրանք ավելի ուշադիր են իրենց առողջության ու քաշի նկատմամբ:

Մեծ Բրիտանիայի յուրաքանչյուր յոթերորդ բնակիչն ունի սիրտ, որի տարիքը 10 տարով գերազանցում է մարմնի մյուս օրգանների տարիքին: Յուրաքանչյուր 14-րդի մոտ այդ խզումը կազմում է 15 տարի: Հետազոտողները հայտնում են, որ զարգացած պետություններում շատ տարածված են արյան մեջ խոլեստերինի մակարդակի բարձրացումը, հիպերտոնիան ու շաքարախտը, իսկ այդ խնդիրները կարող են մահացու վտանգավոր սրտային հիվանդությունների պատճառ դառնալ:

ԽՈՐՀՈՒՐԴ

# ԻՆՉՊԵ՞Ս ՓՈԽԵԼ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ



***Ինչ հաճախ են դիտողություններ անում բնավորությանս պատճառով: Տանը ասում են, որ ժառանգել եմ տան անդամներից յուրաքանչյուրի բնավորության բացասական գծերը: Հնարավո՞ր է փոխել բնավորությունը, եւ, ընդհանրապես, ինչպե՞ս է ձեւավորվում բնավորությունը:***

***Վ.Բ.***

***Թբիլիսի***

Բնավորությունը ձեւավորվում է դաստիարակության եւ սովորությունների ու որակների ձեռքբերման հետ, որը փոխելը շատ դժվար է, քանի որ պետք է ետ կանգնել սովորություններից: Իսկ դա երկարատեւ ու համառ գործընթաց է:

Բնավորությունն աստիճանաբար կփոխվի, եթե հաղթահարվեն վնասակար սովորությունները: Սովորաբար, որեւէ սովորույթ ձեռք է բերվում 40 օրում, որի ընթացքում հաստատվում է տվյալ սովորության պայմանական ռեֆլեքսը: Եթե մարդը կարողանա գիտակցաբար խուսափել որեւէ սովորության կիրառումից եւ այն փոխարինի այլ սովորությամբ, 30-40 օր հետո պայմանական ռեֆլեքսը կարող է թուլանալ ու հեշտությամբ փոխարինվել այլ ռեֆլեքսով:

Պետք է հայտնաբերել ու սահմանել սեփական վատ գծերն ու սովորությունները, աստիճանաբար դրանք փոխարինել նոր սովորություններով, որոնք ավելի օգտակար կլինեն:

Այդ ճանապարհով կարելի է կարգավորել բնավորությունը՝ դարձնելով այն ավելի հարմար ու անվնաս առաջին հերթին ձեզ համար:

ՀՐԱՏԱՊ

# ԻՆՉՊԵՍ ՄԵՂՄԵԼ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ՝ ԵՐԵԽԱՅԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԹՈՂԱԾ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ



*Սկսած 2019 թվականից՝ մեր կյանքի նորմալ, կարելի է ասել, համաչափ ու հավասարակշռված ընթացքը խաթարեց՝ Կորոնավիրուսի համավարակը իր դաժան իրականությամբ իր ու արգելքներով, սահմանափակումներով այն ողջ մարդկությանն ստիպեց փոխել կենսաձեւը, սովորությունները, մոտեցումները, գնահատումները...*

*Քովիդ 19 համավարակը ազդեցություն գործեց կյանքի բոլոր ոլորտների վրա, թեեւ ամենաազդեցիկ հարվածը հասցվեց կրթական ոլորտին, երեխաների դաստիարակչական գործընթացին: Հոգեբանների հավաստմամբ, անցած երկու ուստարիների հեռավար ուսուցումը, բնակարանի չորս պատերում երեխաների մեկուսացումը դեռեւս իրենց զգացնել կտան երեխաների ինչպես կրթական մակարդակի, այնպես էլ՝ հոգեբանական ձեւավորման մեջ:*

*Ինչպես հաղթահարել համավարակային սթրեսի հետեւանքները: Ստորեւ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում համավարակային սթրեսի հաղթահարմանն ուղղված փորձառու հոգեբանների խորհուրդները:*

**Հիմնական եզրակացություններ**

* Համավարակի ամբողջ ընթացքում երեխաները զրկված են եղել բնականոն զարգացման հնարավորություններից:

* Նրանց սոցիալական հմտությունները գործնականում չեն կիրառվել, եւ հնարավոր է, ծնողները ստիպված լինեն ավելի շատ ուղղորդել երեխաներին, քան նախկինում:

* Համավարակի արդյունքում, երեխաների հիասթափված լինելը բնական արձագանք է:

* Հարկավոր է ուշադրություն դարձնել հատկապես այն երեխաներին, ովքեր համավարակի արդյունքում դարձել են չափազանց ինքնամփոփ եւ ունեն կրթական նշանակալի բացթողումներ:

ՔՈՎԻԴ-19 համավարակը բարդ ժամանակահատված է եղել հենց երեխաների համար: Համավարակը նրանց կյանքից շատ ավելին է խլել, քան մեծահասակներից: Ընկերների հետ առկա ուսուցման եւ դեմառդեմ հաղորդակցության պակասը որոշիչ հետք է թողել շատերի կյանքում: Համավարակի էջը թերթելիս՝ վախն ու անորոշությունը անցյալում թողնելը դժվար է լինելու ինչպես շատ մեծահասակների, այնպես էլ՝ երեխաների համար:

**Ինչպե՞ս է համավարակն ազդել երեխաների զարգացման վրա:**

Համավարակի պատճառով ամբողջ աշխարհում երեխաները զրկված են եղել բնականոն զարգացման հնարավորություններից: Դեռահասների աճի, զարգացման եւ ուսման մեջ մեծ դեր ունեն տարբեր ծանոթ ու հոգատար մեծահասակների հետ հարաբերությունները, հասակակիցների հետ ժամանակ անցկացնելը եւ հետաքրքիր ու նոր զբաղմունքները: Թե' երեխաների, թե' պատանիների կյանքը սահմանափակվել է նեղ շրջապատով եւ զուտ ընտանեկան շփումներով: Թեեւ այդ սահմանափակումները պաշտպանել են նրանց ՔՈՎԻԴ-19-ից, միաժամանակ, անկասկած, նաեւ զրկել են կյանքի բազմազանությունից եւ բազմաշերտությունից, որոնք անհրաժեշտ են զարգացման համար:

**Ինչպե՞ս է համավարակն ազդել երեխաների սոցիալական հմտությունների վրա:**

Երեխաները չեն ունեցել սոցիալական հմտությունները գործնականում կիրառելու հնարավորություն: Երեխաները ուրիշների հետ հաղորդակցվել սովորում են նրանց հետ ժամանակ անցկացնելով, ընկերանալով, ինչպես նաեւ լինելով նույնիսկ այն մարդկանց կողքին, ում հետ միշտ չէ, որ կգերադասեին շփվել: Ուստի մենք, անկասկած, որոշ երեխաների շրջանում սոցիալական հմտությունների զարգացման հապաղման նշաններ կնկատենք: Սա սպասելի է, բայց հնարավոր է շտկել:

Ամենակարեւորը, երեխաներին հստակ բացատրելն է, թե ինչպես են ցանկանում, որ նրանք հաղթահարեն իրենց հանդիպած մարտահրավերները: Օրինակ, եթե երեխան մեկ ուրիշ երեխայից խլում է խաղալիքը, դուք կարող եք ասել. «Իհարկե, դու ուզում ես խաղալիքը: Գիտե՞ս՝ ինչ պետք է անել. կարող ես ասել՝ երբ վերջացնես խաղալը, կարո՞ղ եմ ես էլ խաղալ»: Մի' բարկացեք ձեր երեխայի վրա, քանի որ նա միշտ չէ, որ գիտի շփման համապատասխան ձեւերը: Մենք չպետք է ակնկալենք, որ երեխաները կկարողանան ինքնուրույն գլուխ հանել: Այժմ մենք պետք է ավելի շատ սովորեցնենք ու ավելի հստակ ցուցումներ տանք երեխաներին, քան նախկինում:

**Ինչպե՞ս է համավարակն ազդել երեխաների հոգեկան առողջության վրա:**

Համավարակն, անշուշտ, մեծ սթրեսի է ենթարկել երեխաներին ու նրանց ընտանիքներին: Երեխաները շատ տխուր են, անհանգիստ եւ նույնիսկ շատ բարկացած այն ամենի պատճառով, ինչի միջով անցնում են: Ուստի հնարավոր է՝ մոտ ապագայում տեսնենք, որ հուզական առումով սովորականից փոքր-ինչ ավելի փխրուն են: Մենք կարող ենք օգնել նրանց, եթե լինենք համբերատար, օգնենք, որ խոսեն իրենց զգացմունքների մասին: Թեկուզ արվեստի ճանապարհով մենք պետք է փորձենք մխիթարել եւ ապրեցնել մեր երեխաներին:

(Շարունակությունը՝ հաջորդ համարում)

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



☞ Մարդն ստեղծված է հասարակության համար: Նա ընդունակ չէ եւ քաջություն չունի ապրել միայնակ:

***Ու. Բլեքսթոուն***

Նա, ով երեւակայում է, որ կարող է յոլա գնալ առանց ուրիշ մարդկանց, խիստ սխալվում է, բայց նա, ով երեւակայում է, թե առանց իրեն մարդիկ չեն կարող յոլա գնալ, էլ ավելի է սխալվում:

***Ֆ. Լառոշֆուկո***

☞ Հիրավի մեծ են նրանք, ում սիրտը խփում է բոլորի համար:

***Ռ. Ռոլան***

☞ Ասել, թե բարոյական իդեալները բնածին են կամ բնազդի արդյունք, դա նույնն է պնդել, թե իբր մարդն ընդունակ է կարդալ՝ դեռեւս չիմանալով այբուբենի տառերը:

***Պ. Հոլբախ***

☞ Մարդուն յուրակատուկ է ոչ միայն խոնարհվել մեծի առջեւ, այլեւ ձգտել գերազանցել նրան:

***Վ. Ի. Մուխին***

☞ Երբեմն ժպտացողն ավելի տխուր է, քան բարձրաձայն հեկեկացողը:

***Տ.Գասպարյան***

***«Վրաստանի» ընթերցող***

***Թբիլիսի***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԿՍՎԵՑ ՆՈՐ` 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

### ԱՅՍ ՏԱՐԻ ԵՐԿՐՈՒՄ ՇՈՒՐՋ 40 ՀԱԶԱՐ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻ Է

*2022 թվականի սեպտեմբերի 1-ին Հայաստանի հանրակրթական դպրոցներում հնչեց նոր ուսումնական տարվա Առաջին զանգը:*




Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից նշնը նշում է, որ այս տարի առաջին դասարան կհաճախեն 2016 թվակին ծնված երեխաները: Առաջին դասարանցիների վերջնական թիվը պարզ կդառնա սեպտեմբերի 10-ին, երբ դպրոցներն ավարտած կլինեն էլեկտրոնային համակարգում վերջնական տվյալների մուտքագրումը:

Ըստ գնահատման թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) հրապարակած տվյալների, միասնական քննություններին մասնակցել է 11 587 դիմորդ, որոնցից բուհ է ընդունվել 7 246, անբավարար է ստացել 3 076 հոգի: Բուհ դիմած, միասնական քննություններին մասնակցած եւ դրական միավորով չընդունված դիմորդների թիվը կազմում է 791: Ըստ տվյալների, ընդունելության հիմնական փուլի արդյունքներով բուհերին տրամադրված 1 918 անվճար տեղերից համալրվել էր 1 433-ը, իսկ 21 761 վճարովի տեղերից` 6 518-ը. 550 անվճար ու ավելի քան 15 հազար վճարովի տեղ մնացել է թափուր: Ընդունելության քննության մրցույթի երկրորդ փուլին` թափուր մնացած տեղերի համար, արդեն հանձնված քննությունների արդյունքներով, հայտագրվել է 772 դիմորդ: Նրանցից 755 -ն ընդունվել է նշած մինչեւ 6 մասնագիտություններից մեկով, 17-ը չեն ընդունվել:

Նոր ուսումնական տարվա առթիվ դպրոցականներին, ուսանողներին, մանկավարժներին, դասախոսներին, ծնողներին շնորհավորանքի եւ ողջույնի ուղերձներ հղեցին Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը,. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ` ԱՐՏԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ



*Օգոստոսի 27-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցեց արտախորհրդարանական քաղաքական ուժերի հետ համագործակցության խորհրդակցական ժողովի հերթական նիստին:*

Ներկա են գտնվել «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը, Հայաստանի Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցության նախագահ Լեւոն Շիրինյանը, «Միասնական հայրենիք» կուսակցության նախագահ Մհեր Տերտերյանը, «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության ղեկավար Դավիթ Սանասարյանը, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցության Հայաստանի վարչության ատենապետ Սեդրակ Աճեմյանը եւ «Ուժը հայրենյաց» կուսակցության նախագահ Տիգրան Արզաքանցյանը:

## ՄՇԱԿՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

*Ապագա Հայկական համաժողովին ընդառաջ փորձագիտական հանձնախմբի շրջանակում Հայաստանի եւ Սփյուռքի տարբեր փորձագետների ներգրավմամբ կքննարկվեն սցենարներ, կմշակվեն Հայաստան-Սփյուռք փոխգործակցությունն էլ ավելի խորացնելու, Հայրենիքի եւ Սփյուռքի ներուժն առավելագույնս օգտագործելու առաջարկներ, կնախանշվեն ուղղություններ, որոնք կներկայացվեն արդեն համաժողովի քննարկմանը, ապա նաեւ կհետեւեն գործնական քայլեր դրանք կյանքի կոչելու համար:*

Օգոստոսի 31-ին կայացավ «Հայաստան-Սփյուռք միասնականություն» փորձագիտական հանձնախմբի անդրանիկ հանդիպումը` «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանի ղեկավարությամբ:

Համաժողովին ընդառաջ փորձագիտական երեք հանձնախումբ է ձեւավորվել: Դրանցում քննարկվելու են սցենարները, հետո դրանց հիման վրա հնարավոր առաջարկությունների փաթեթներ են ներկայացվելու Ապագա Հայկական համաժողովի քննարկմանը եւ մասնակիցների կողմից ընդունմանը:

Փորձագիտական հանձնախումբը կաշխատի մինչեւ հոկտեմբերի վերջ, այդ ընթացքում կունենա 6-7 հանդիպում: Հանձնախմբի մասնակիցների մի մասը Սփյուռքում է, այսպիսով` կլինեն ինչպես առկա, այնպես էլ` առցանց հանդիպումներ:

Իսկ ահա համաժողովին լինելու են հավասար թվով մասնակիցներ` Հայրենիքից` Հայաստանից ու Արցախից եւ Սփյուռքից:

## ԿՐԹԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Երեւանում օգոստոսի 22-25-ն անցկացվել է ECER (European Conference on Educational Research) 2022 համաժողովը, որին մասնակցում է կրթության ոլորտի շուրջ 1000 հետազոտող, գիտնական` 70 երկրից:*

Լինելով Հայաստանում գործող կրթական հետազոտություններով մասնագիտացած կենտրոն` Կրթական հետազոտությունների եւ խորհրդատվությունների կենտրոնը ակտիվորեն ներգրավված էր համաժողովին, որտեղ ներկայացվեց երկու զեկույց` համավարակի ընթացքում կրթության իրավունքի իրացման եւ եզդի երեխաների կրթության իրավունքների վերաբերյալ:

ECER 2022 համաժողովի շրջանակներում, Կրթական հետազոտությունների եւ խորհրդատվությունների կենտրոնի փորձագիտական թիմը կազմակերպել էր նաեւ պանելային քննարկում «Կրթությունից դուրս մնացած երեխաների շուրջ առկա դիսկուսը Հայաստանում» խորագրով:

Պանելային քննարկման մասնակիցները նաեւ անդրադարձել են եւ կիսվել իրենց երկրների փորձով` նշելով, որ Մեծ Բրիտանիայում, Հունաստանում ու այլ երկրներում այս խնդիրը նույնպես արդիական է եւ մշտապես գտնվում է կրթության ոլորտի հետազոտողների ու որոշում կայացնողների ուշադրության կենտրոնում:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԿՄԵԿՆԵՆ ԹՈՒՐՔԻԱ

*Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորներ Էդուարդ Աղաջանյանն ու Արմեն Գեւորգյանը Թուրքիայի Իզմիր քաղաքում կմասնակցեն Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) Սոցիալական, առողջապահության եւ կայուն զարգացման հարցերի հանձնաժողովի նիստի աշխատանքներին:*

*Հայաստանի ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը կարգադրություն է ստորագրել պատգամավորներին Թուրքիայի Հանրապետություն գործուղելու մասին:*

*ԵԽԽՎ Սոցիալական, առողջապահության եւ կայուն զարգացման հարցերի հանձնաժողովի նիստը տեղի կունենա սեպտեմբերի 21-24-ը:*

## ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՐՑԱԽ

*Արցախից դեպի Հայաստան եւ հակառակ ուղղությամբ երթեւեկությունն արդեն իրականացվում է այլընտրանքային երթուղով` շրջանցելով Բերձոր քաղաքը:*

*Ստեփանակերտ-Գորիս նոր երթուղին, որը սկսվում է Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանի խաչմերուկից` շահագործվեց օգոստոսի 30-ի ժամը 20:00-ից:*

*Ճանապարհի երկայնքով տեղակայվել են ռուս խաղաղապահները: Այստեղ ուժեղացված ծառայություն են իրականացնում նաեւ ներքին գործերի նախարարության ոստիկանության ճանապարհային ոստիկանները եւ արտակարգ իրավիճակների պետական ծառայության փրկարարները` հսկելով քաղաքացիների անվտանգ ելումուտը:*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ ԿԱԶՄԵԼ Է 13,1 ՏՈԿՈՍ

*Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022 թվականի հունվար-հուլիսին 13,1 տոկոսով ավելացել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:*

*2022 թվականի հունվար-հուլիսին սպառողական գների ինդեքսը, 2021-ի հունվար-հուլիսի համեմատ, աճել է 8,3 տոկոսով:*

## ԳՐԱՆՑՎԵԼ Է COVID-19-Ի ՎԱՐԱԿՄԱՆ 2124 ԴԵՊՔ

*Հայաստանի առողջապահության նախարարության տվյալներով, Հայաստանում օգոստոսի 22-28-ն ընկած ժամանակահատվածում հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության 2124 դեպք: Դեպքերի ընդհանուր թիվը հասել է 434 հազար 398-ի, որից 421 հազար 316-ը` առողջացման, 8655-ը` մահվան ելքով:*

*Վերջին մեկ շաբաթվա ընթացքում առողջացել է 1788, մահացել` 7 մարդ:*

*Կորոնավիրուսային հիվանդությունից այս պահին փաստացի բուժում է ստանում 2745 բուժառու:*

*Մեկ շաբաթում կատարվել է 6 հազար 131 թեստավորում:*

*Թեստավորումների ընդհանուր թիվը հասել է 3 միլիոն 184 հազար 464-ի:*

## ԵՐԵՎԱՆՈՒՄ ՕԴԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԵԼ Է ԿԱՐՄԻՐ ԳԾԻՆ

*Երեւանը օդի աղտոտվածության ցուցանիշով կարմիր գոտում է: Երեւանից հետո Հայաստանի ամբողջ տարածքում փոշուց ամենաշատն աղտոտված են Վանաձոր, Ալավերդի եւ Գյումրի քաղաքները:*

«Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալներով, դա պայմանավորված է վերջին տարիներին Երեւանում իրականացվող համատարած շինարարության, հանքարդյունաբերության ավելացման եւ աղբավայրերի բաց այրման հետեւանքով: Իսկ մթնոլորտում գոյություն ունեցող գազերի առկայությունը պայմանավորված է հիմնականում ավտոտրանսպորտի արտանետումներով, քանի որ Երեւանում հիմնական աղտոտման շարժական աղբյուրը ավտոտրանսպորտն է, իսկ անշարժ աղբյուրներից` բնակարաններում այրվող եւ ջերմաէլեկտրակայանում արտադրվող հոսանքի համար այրվող գազը:

Նշվում է, որ օգոստոսի 8-14-ը ընկած ժամանակահատվածում իրականացված մոնիթորինգի արդյունքներով, այդ օրերին Երեւանում փոշու պարունակությունը գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան մինչեւ 3,5 անգամ:

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի տվյալներով, մեկ տարվա ընթացքում միայն Երեւանում վարչական տույժի է ենթարկվել 29 շինարարական կազմակերպություն` ընդհանուր տուգանվելով 4 միլիոն 500 հազար դրամ, իսկ բնությանը պատճառած վնասի մասով կիրառվել է 1 միլիոն 201 հազար 721 դրամի տուգանք:

Այս տարվա ընթացքում արդեն իսկ ստուգվել է 9 հանքավայր, որոնց նկատմամբ վարչական տույժեր են նշանակվել 2 միլիոն 530 հազար դրամի չափով, եւ հաշվարկվել է բնությանը պատճառված վնասի չափը, որը կազմել է 23 միլիոն 74 հազար 228 դրամ:

Ավտոտրանսպորտային միջոցներով նյութերի եւ աղբի տեղափոխման ժամանակ մթնոլորտային օդի պահպանության պահանջների չկատարումն առաջացնում է տուգանքի նշանակում` 50.000 ՀՀ դրամի չափով:

Շինարարության ընթացքում մթնոլորտային օդի պահպանության պահանջների չկատարումն առաջացնում է տուգանքի նշանակում` 100.000 ՀՀ դրամի չափով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՍԵՊՏԵՄԲԵՐ



***4.09.2022 Բարեկենդան Սուրբ Խաչի պահոց***

Բարեկենդանը պահքին նախորդող կիրակին է, որը նվիրված է տաղավար տոներից մեկին՝ Խաչվերացին եւ տեւում է երկուշաբթիից մինչեւ շաբաթ:

***8.09.2022Ս. Կույս Մարիամի ծնունդն Աննայից***

Սուրբ Աստվածածնի ծնունդը նկարագրված չէ Աստվածաշունչ մատյանում, այն մեզ փոխանցվել է եկեղեցու Սրբազան ավանդությամբ: Կույսի ծնողները՝ Հովակիմն ու Աննան, երկար ժամանակ երեխա չէին ունենում: Եվ մի օր, երբ Աննան իջնում է պարտեզ աղոթելու, հանկարծ հայտնվում է Տիրոջ հրեշտակը եւ ավետում, որ զավակ է ունենալու, ում երանի են տալու բոլոր ազգերը: Աննան գոհություն է հայտնում Աստծուն, որ լսեց իր անդադրում աղոթքների ձայնը: Նա խոստանում է իր զավակին Աստծուն նվիրել: Նույն այս տեսիլքը երեւում է նաեւ Հովակիմին՝ հայտնելով բարի լուրը: Աննան հղիանում է, աղջիկ ունենում, որին անվանում են Մարիամ, այսինքն՝ լուսավորյալ: Նա էր այն ընտրյալը երկրի վրա, ում Աստված իր առաքինությունների ու արժանիքների շնորհիվ պատվեց լինելու Աստծու մայրը:

ԹԵԺ ԳԻԾ

## ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

*Շտապ բժշկական օգնություն* - **112**
*Պարեկային ոստիկանություն* - **112**
*Հրշեջ-փրկարար ծառայություն* - **112**
*Պահակային ոստիկանություն* - **125**
*Գլխավոր տեսչություն* - **126**
*Տեղեկատու բյուրո* - **118 08**
*Քաղաքապետարանի թեժ գիծ* - **272-22-22**
*Առողջապահության նախարարության թեժ գիծ* - **15-05**
*Ժողովրդական պաշտպան* - **299-58-98, 292-24-79**
*Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն* - **1481**
*«Թբիլիսի էներջի»-ի տեղեկատվական ծառայություն* - **114, 240-40-04**
*«Վարկեթիլաիրի»-ի տեղեկատվական ծառայություն* - **227-50-40**
*ԹԵԼՄԻԿՈ-ի թեժ գիծ* - **16 700, (+995 32) 5 000 777**
*Ջրամատակարարման թեժ գիծ* - **293-11-11**
*Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ* - **(593) 50-42-52**
*Օդանավակայանի տեղեկատվական բյուրո* - **231-03-41, 231-04-21**
*Երկաթուղային կայարան* - **1331, 2199010**
*Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան* - **(599) 74-73-73**

«ԹԲԻԼԻՍՈԲԱ 2022»

## ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԿՀԱՏԿԱՑՎԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

 თბილისის მერია

***Թբիլիսիի քաղաքապետարանը նախատեսում է 2022 թվականի հոկտեմբերի 1-2-ը անցկացվելիք մայրաքաղաքի ավանդական տոնի՝ «Թբիլիսոբայի» համար ծախսել 3 մլն 050 հազար լարի:***



«Թբիլիսիի քաղաքապետարանը Թբիլիսիի տոնը նշելու եւ մայրաքաղաքում տոնական տրամադրություն ստեղծելու համար, նախատեսում է իրականացնել տարբեր միջոցառումներ, որոնք կլինեն բավական ծավալուն ու բազմազան: 2022 թվականի հոկտեմբերի 1-ին եւ 2-ին վերանորոգված Օրբելիանու, Գուդիաշվիլու հրապարակներում, Լեղվթախեւիում եւ Ռիղեի այգում հատուկ կազմակերպված տարածքներում կանցկացվեն տարբեր միջոցառումներ ու համերգներ, որոնք նախատեսված են հաշվի առնելով բոլոր տարիքային կատեգորիաները»,- նշված է Պետական գնումների գործակալության կայքում հրապարակված տեղեկատվության մեջ:

- Մեր քաղաքն արժանի է, որ իր տոնն արժանապատիվ նշվի, եւ դա այն է, ինչ մենք խոստանում ենք թբիլիսցիներին:

2022 թվականի «Թբիլիսոբայի» միջոցառման կազմակերպման անհրաժեշտ ծառայությունների ձեռքբերման համար անհրաժեշտ են միջոցներ, եւ դա պետք է կատարվի սահուն՝ սահմանափակ ժամկետներում,-հայտարարեց Կախա Կալաձեն եւ հավելեց, որ քաղաքապետարանն սպասում է պատվիրակությունների Թբիլիսիի բարեկամ եւ գործընկեր քաղաքներից:

«ԵՎՐՈԲԱՍԿԵՏ 2022»

## ՎՐԱՍՏԱՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒՄ Է ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ

FIBA EUROBASKET CZECH REPUBLIC • GEORGIA • ITALY • GERMANY

***Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի նորակառույց մարզապալատում, սեպտեմբերի 1-7-ը անցկացվում են բասկետբոլի Եվրոպայի առաջնության՝ «Եվրոբասկետ-2022»-ի «A» խմբի հանդիպումները:***

Այդ իրադարձությունը նշանակալից է նրանով, որ Վրաստանը, որպես տանտեր, իրավունք ստացավ մասնակցելու մրցաշարին: Նաեւ այն բանով, որ այս տարի Վրաստանը նշում է վրացական բասկետբոլի 100-ամյակը:

Սեպտեմբերի 1-ին Թբիլիսիում սկսված Եվրոբասկետի մեկնարկային փուլում Վրաստանի հավաքականը, «A» խմբի շրջանակներում, իր ուժերը չափեց Բելգիայի հավաքականի հետ: Հիմնական ժամանակում թիմերի մրցապայքարն ավարտվեց ոչ-ոքի՝ 70:70, իսկ օվելթայմում վրաց բասկետբոլիստները 76:79 հաշվով զիջեցին մրցակցին:

Այդ խմբում հանդես եկող Իսպանիայի թիմը 114-87 հաշվով պարտության մատնեց Բուլղարիայի հավաքականին, Թուրքիան՝ 72:68 հաշվով, առավելության հասավ Մոնթենեգրոյի թիմի նկատմամբ:

Նշենք, որ Վրաստանի հետ միասին, Չեխիայում, Գերմանիայում եւ Իտալիայում անցկացվող ներկայիս Եվրոբասկետին մասնակցում են չորս խմբերում բաժանված 24 թիմեր:

Խմբային մրցաշարի արդյունքներով, յուրաքանչյուր խմբի լավագույն 4 թիմերն անցնում են հաջորդ փուլ եւ ստանում փլեյ-օֆֆին մասնակցելու իրավունք:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հայ նշանավոր կոմպոզիտոր: 5.Վրաց թատրոնի եւ կինոյի դերասանուհի … Աբաշիձե: 10.Լեռ, բարձրունք: 11. Խավար, ոչ լուսավոր: 12.Աջարիայի նախկին ղեկավար … Աբաշիձե: 14.Երիտասարդ երգչուհի … Մուկուչյան: 17.Ձով, հով: 18.Իգական անուն: 19.Քաղաք ՌԴ-ում: 20.« Սիրուն թիթեռ, ինձ …» («Թիթեռ» երգից): 21.Թռչնի տեսակ: 22.Մոնթ, աշակերտ: 24.Րաֆֆու պատմավեպերից: 25.Թարմ, չչորացած: 28.Լճի, ծովի, գետի …: 29.Տարվա եղանակ: 30.Հայաստանի մայրաքաղաքներից: 31.Վեցերորդ ձայնանիշը: 33.Ականներով պատված դաշտ: 36.Առողջարանային քաղաք Հայաստանում: 37.Աստվածաշնչյան զոհ: 38.Չտատանվող, չերերացող: 39.Նար-Դոսի օպերային երգիչ որդին (անունը): 41.Ժամանակի միավոր: 42.Տարի, ամյակ: 43.«…, քույրեր, սեգ սարերի» («Անուշ»): 47.Դեղձից ու շաքարից պատրաստված ուտեստ: 48.Շատ հայտնի փողոց Մոսկվայում: 49.Վիրահայ գրող Ժորա Սնխչյանի ժողովածուներից: 50.Եկեղեցական «սովածություն»:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ե՛վ անուն, ե՛ւ գեղեցիկ ծաղիկ: 2.Երկրի փոքրացրած պատկերը թղթի վրա: 3.Վարդգես Պետրոսյանի գրական հերոս: 4.Հովհ. Թումանյանի լեգենդներից: 6.Ռուս մեծ պոետ: 7.Լեզուն ուսումնասիրող, լեզվով հետաքրքրվող: 8.Ե՛վ սար, ե՛ւ գետ Հայաստանում: 9.«… պես աղջիկ Աստվածամոր աչքերով» (Վ.Տերյան): 13.Մոսկվայաբնակ վրաց երգիչ … Պավլիաշվիլի: 15.Հայ հանրահայտ ծանրամարտիկ, Օլիմպիական չեմպիոն: 16.Վանքային համալիր Սյունիքի մարզում: 21.Ալլա Պուգաչովայի երգացանկից: 22.Նար-Դոսի հերոսուհի: 23.Մակերեսի չափման միավոր: 25.Միջնադարի իտալացի բանաստեղծ … Ալիգերի: 26.Ամայի, բուսազուրկ: 27.Ինդոնեզացի նկարիչ: 28.Դանիացի գրող, բանաստեղծ, հեքիաթագիր: 32.«Այնտեղ, ուր ծաղկում են վայրի վարդերը» գրքի հեղինակը: 34.Շոթա Ռուսթավելու գրական հերոս: 36.«Հագավ, կապեց զենք ու …» («Թմկաբերդի առումը» պոեմից): 38.Էշի ձագը: 40.Հորիզոնի կողմերից: 41.Անասուն, կճղակավոր կենդանի: 44.Վրաստանի Ախալցիխե քաղաքում ծնված հայ դերասան … Խաչվանքյան: 45.Լեռնագագաթ Արցախում: 46.Մարմնի մաս: 47.Ամերիկյան գերտերություն:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Եղյամ: 8.Իկոնա: 10.Ռեալ: 11.Բառ: 13.Դարան: 14.Վարդուհի: 16.Կամո: 17.Սե: 18.Միջուկ: 20.Շիլա: 22.Ռոմ: 23.Սկոտ: 27.Հաբեթ: 29.Խնամի: 32.Պաս: 33.Շեմ: 35.Ատոմ: 36.Ալիկա: 37.Գնաց: 39.Ցեց: 42.Նախշ: 44.Միմինո: 46.Կայմ: 49.Ծիլ: 50.Լալա: 53.Կտուց: 54.Շեղ: 55.Լիմ: 56.Պրուս: 57.Բեմ: 58.ՖԻՖԱ: 59.Նառ: 60.Լավ: 61.Կառ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ուղղաթիռ: 2.Ամեն: 3.Սիլվա: 4.Մոնրո: 5.Խաբուսիկ: 7.Առաքում: 9.Բռի: 12.Ահել: 15.Ամեոբա: 19.Ջոկատ: 21.Աղ: 24.Կապոց: 25.Տեսակ: 26.Հիմն: 28.Բեկ: 30.Նամե: 31.Մոգ: 33.Շիվա: 34.Մարշ: 38.Անիծ: 40.Ցայտուն: 41.Դիլեմա: 42.Նող: 43.Խալիֆա: 45.Միշել: 47.Ակր: 48.Մուսա: 51.Ալիկ: 52.Ամառ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ᲩᲕᲔᲜᲘ ᲛᲘᲡᲐᲛᲐᲠᲗᲘ: ᲗᲑᲘᲚᲘᲡᲘ 0105, Გ.ᲐᲗᲝᲜᲔᲚᲘᲡ ᲥᲣᲩᲐ 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ᲢᲔᲚ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ᲕᲠᲐᲡᲢᲐᲜᲘ»
ᲗᲑᲘᲚᲘᲡᲘ, ᲡᲐᲥᲐᲠᲗᲕᲔᲚᲝ
“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445